## ՃԱՌՔ.

**Վ.եհ. Հայրապետի ի հանդիսի Տօնախմբութեան Անուան կարդացեալ Ճառքըն են հետեւեալները՝ ինչպէս խոստացեալ էինք անցեալ ամսաթերթով:**

## ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Ի Մեծաշուք հանդիսիս ուր ամենայն երախտապարտ հոգի անձկանօք սրտի փութայ հանդիսակից գտանիլ շնորհապարդ Տօնախմբութեան զգրուատելի Անուան Վեհափառ Օծութեանդ, ի բարեպատեհ ժամու՝ այն ինչ անպատ սէր և գութ բարեխնամ Հօրդ հասարակացս առատապէս տարածի ի վերայ մեր ամենեցուն, բարեհաճեսցի Աստուածապատիւ Տէրդ, բարեհաճեսցի օրհնել կամք Ձեր ներել վստահութեանս որ ի բաղձանաց սրտիս ստիպեալ փափագիմ հոգեւորականացս դասուց որդիական սրտից խորին և գեղեցիկ զգացմանց թարգման հանդիսանալ։

Եթէ վերնախնամ Տեսչութիւնն, յոր հաւատոյ խոկ եմք, ստուգապէս նախասահման տնօրէն և հիմնադիր է մեծի Քահանայապետութեանդ՝ անշուշտ իմն է զի մարդկային բարերջանիկ կեանք և ամենայն բարօրութիւնք նորա կախին զԱստուածեղէն իշխանութենէդ. և մեծի Քահանայապետութեանդ գերագոյն իրաւասութիւնն է միմիայն ազատ տնօրէն ամենայն բարեկարգութեանց և օգտից հասարակաց, վասն զի զԱստուծոյն ունելով յերկրի զՓոխանորդութիւն, զատաւորութեան վիճակեալ վսեմ կոչման և աստիճանի՝ երբէք չառնիրաւէք ումեք, որք ի ձեր խնամս հաւատացան ի վերուստ ժողովուրդ փրկեալ, ժողովուրդ սեփհական, ոյր սակս աւասիկ ժողով մեծ և պատկառելի, որ ակնկառոյց կայ տեսանել ի Ձէնջ զարժանի մրցանակս առաքինութեան։

Վեհափառ Տէր, զի որպէս ի Հայրապետական պատկառելի պաշտամանդ ստանձնեցիք զհոգ ազգային ծանր և դժուարակիր՝ փութացայք արգարև՝ կարողապէս և անթերի իրագործել զայնոսիկ՝ որ ինչ իշխանական Վեհ Անուանդ, պատուոյ և փառացդ էր վայելուչ. թո՛ղ ուրեմն այսուհետև ևս հոսեսցին քրտունք ձեր բարոյականք, զի փոխարէն այդոցիկ անգուգական բարեացդ չի՛ք ուստեք ապերախտութիւն, զի բարութիւնք ձեր ի պէտս Ազգիս անգուգականք են և նախանձելի, և երջանկութիւն ժողովրդեան Ձերոյ նմանապէս մեծ են և յաւերժական։

Աստանօր հարկ իմն անհրաժեշտ ստիպէ զիս հրաւիրել զընդհանուր ուշադրութիւնս յանցեալ դարս, ուր ցաւօք սրտի յիշեմք զի անհուն ժամանակք անհետ անցան սահեցան ի յաւիտենականութեանն Ովկիանոս, անթիւ աւուրք միմեանց յաջորդեցին, և յոգնաթիւ անձինք վերաբազմեցան ի գերագահ Աթոռ Քահանայապետութեանդ. բայց ո՞յք ոմանք արդեօք յայնմ խուռն բազմութեան՝ իրապէս եղեն այդ Աստուածեղէն իշխանութեան բուն իսկ նշանակութեան համապատասխան. ո՞հ. յոյժ սակաւք. վասն զի, որ ո՛չ է ծընեալ ի բարին հասարակաց, այլ միայն հայի յանձնդիւրութիւնս և յանդորրասէր հեշտութիւնս փափկութեանց՝ չ'կարեմք անուանել զմարդն այն մարդ բանական, մարդ շահաւէտ և պիտանի ընկերութեան։ Իսկ դուք, Աստուածապատիւ Քահանայապետ, որ հանապազ զանձն ձեր նուիրեալ էք ի բարին և յօգուտն հասարակաց՝ գերագանց հանդիսացայք, ո՞ւմ արդեօք զձեզ նմանեցուցանել կարեմք, զի դուք ձերով արժանավայել երկօք վաստակոցդ գեր ի վերոյ էք քան զոր խնդրեմ օրինակ. բանք իմ իրաւացի են և ո՛չ կեղծիք։

Ահաւասիկ անհուն բարերարութեամբք երախտապարտս կացուցիք զամենեսեան, զի քաջակորով ձեռք ձեր հաճեցան պսակել զանձկալի յոյս մեր և ամենեցուն՝ կառուցանելով զայն սքանչելաշէն մեծակառոյց և հոյակապ ճեմարանն՝ որ Աստուածընտիր Քահանայապետիդ առաքինազարդ Վեհանձն Հոգւոյ սիրալի մեծագործութեան յաւերժական յիշատակաց արժանի պանծալի արգասիք հանդիսանայ, և անդր քան զյաւիտեանս իրաւամբ անմահացուցանէ զգրուատելի գերապանծ Անունն Վեհափառ Օծութեանդ։ Այդ գիտութեան և լուսաւորութեան երկնային Ոգդ շնորհարաշէն խորանն արդա՛րև խոստանայ մատակարարել ազգիս լուսաւորութեան երջանիկ կեանք, աներկեւան խոստանայ ծագել զպարերախտութեան ցանկալի լոյս մտաց Հայ մանկտոյն և անձկայրեաց սրտից Հայ որերոյն։ Նոյնպէս և Մայր Աթոռոյս տպարանական շքեղաշուք բարեկարգութիւնքն մշտաքարոզ վկայեն եռանդուն հետեւողութեանդ զլուսաւորութեան Ազգիս. քանզի տպարանն այն՝ որ ի սկզբանէ անտի յանտերունջ ողորմելի դրութեան գտանիւր, Դուք վերականգնեալ զնոր կենդանութիւն շնորհեցիք։

Այսպէս զգալի ապացոյցք իսկ են որպէս երկքին նորակառոյց վայելուչ խորանք անձնադիր ջանիցդ և հոգացողութեանց զպայծառութեանց և զներքին բարեկարգութեանց լուսակառոյց Աստուածարնակ սուրբ Տաճարիս։

Հովուապետ բարի, մի՞թէ բանականացս միտք որքա՛ն և տկար, որքա՜ն և անփոյթ գոցի, մի՞թէ չէ իրաւեկ այն անսահման ջերմեռանդ ազգասիրութեան և ուսումնասիրութեան Ձեր՝ որով ի սուղ ինչ միջոցի բազում ուսումնարանք զգոյութիւն առացան ի գիւղօրայս, և ո՞ առաջնորդէր այնց դպրոցաց բազմաց հսկայաքայլ յառաջադիմութեան յուսման լուսաւոր ասպարիզի. ո՞ այլ եթէ ոչ դպրոցական անվրէպ ուղղեցոյց այնոքիկ կանոնք. զորս Վեհափառ Օծութիւն ձեր տնօ-

ըննարար ընդհանուր հրատարակել բարերարեաց:
Եւ արդ՝ ընդ այսոցիկ երախտեացդ մնայ մեզ բարերարեալ որդւոցս պատկառ կալ անմոռանալի բարերարութեանցդ, և ամենահպատակօրէն երախտագիտական հոգւով՝ միաբանական ձայնիւ և ջերմեռանդ սրտիւ կարդալ առ Բարձրեալ ամենակարողն Աստուած, որպէս զի երկարեսցէ Տէր զաւուրս անգին կենաց Աստուածանման Հայրապետիդ, շնորհեսցէ զկարատև առողջութիւն և զյաջողութիւն ամենայն աջօգուտ ձեռնարկութեանցդ և զյառաջադիմութիւն ամենայն բարի նպատակացդ:

Վրթանէս Վարդապետ Խաչատրեանց:

---

ԱՌ ԱՔԵԼԱՊԱՏԻՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ·

Ի հոգեզուարճ աւուրս մեծի հանդիսի, աստանօր միահամուռ ակմբեալ կաճառք սրբազանից և բիւրք ժառանգաւորաց որդւոց Մօրս Լուսոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի փութան, ո՛ն անդր ըստ ըղձից անձկութեան սրտից յաւերժացուցանել ըղձքացըն յիշատակ Տարեդարձի Անուանակոչութեան տօնի Մեծի Քահանայապետիդ և Գլխոյ լրութեան ազգիս Հայոց, որպէս և այսօր Եկեղեցի Քրիստոսի տօնէ զհանրատենչ տօնախմբութիւն նահատակութեան Գէորգեայ քաջայաղթ զօրավարին Քրիստոսի, որ ըստ Քրիստոսականն դաւանութեան ընկալաւ զպատիւ, Աստուածպաշտութեանն և կրօնասիրութեան քաջ ախոյեան հանդիսացեալ. և այնպէս ըստ Աւետարանական ասնին առեալ զԽաչն զկնի ընթացաւ Տեառն Յիսուսի, որով և զյաւիտենական ընկալաւ զպսակ:
Վեհափառ Տէ՛ր, իրաւամբ և Դուք այսօր կրէք զանուանակոչութիւն սրբոյ նահատակին Քրիստոսի. քանզի դուք, Աստուածապատիւ Քահանայապետ, որ ցայսօր զա՛հակալէք զԱթոռ Առաքելական իշխանութեան Թադէոսի և Բարդուղիմէոսի երջանկայիշատակ սրբազան առաքելոց. և բազմաչարչար Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց Հայրապետին, ո՛չ դադարէք զոհել և զգիշեր ազգի ազգի անձանձիր աշխատասիրութեամբք՝ զեկեղեցիս հաստատել և զուսումնարանս կառուցանել, ի քաղաքս և ի գիւղօրայս, օրինակ ձեզ կալեալ զերանաշնորհ և զանխոնջ իմաստութեանց և գիտութեանց, զՄեսրովբ և զՍահակ Թարգմանիչս Հայկական տառից և զհայրենասէր պանծալիս, որք զյիշատակ անուանց իւրեանց անմահ կացուցին յաշխարհի աստ և ի հանդերձելումն.
Թէպէտ և այսօր Հայաստան դրախտավայր երկիր մերոց Հայրենեաց քաջաց դիւցազանց՝ զրկեալ գնի յԱրքայական գահակալութենէ, այլ սակայն, և զԱթոռ Հայրապետութեան չքնաղապանծ և հաստատուն ի վերայ առաքելական վիմի Տեսչութիւնն վերին հաստատուն պահեալ շնորհեաց մեզ ի մխիթարութիւն. ուրեմն երջանիկ է Հայաստան սեպհական մերս հայրենիք, և շնորհակալ պարտիմք զոհել Արարչին մանաւանդ որ զքաջարթուն Հովուապետդ պարգևեալ է մեզ ի տածել զբանաւոր Հօտ իւր յասպարիզի կրօնասիրութեան և ի լուսաշաւիղ պողոտայն իմաստութեան և գիտութեան, որում՝ ազգ Հայոց ակնածի անթարթ աչօք շնորհիւ Հօրդ հասարակաց տեսանել զայն օր ցանկալի.
Բա՛րէ, սրբազան հանդիսականք, տարապայման է զգացումն սրտից հասարակութեան. վասն զի հա՛ն զոյն Հայրապետի մեծին Ներսէսի շնորհեցաւ անօգնական ազգիս Հայոց հովիւ հոգևոր և ժրաջան մշակ եղեմական այգւոյն Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ յօրէ գահակալութեան իւրոյ յԱթոռ Հայրապետութեան ախոյեան հանդիսացեալ յաղթէ մեծամեծ դժուարութեանց ընդառաջելոց Ազգաշահ գործառնութեանց, և ըստ երկնաձիր հանճարոյն՝ ջան ի գործ դնէ յանձն իւր բերել զնմանութիւն նախկին շնորհածաւալ Հայրապետացն մերոց, որք զՀայաստան աշխարհ ազգի ազգի բարեկարգութեամբք զարդարեցին.
Եւ ահա՛, Վեհափառ Տէ՛ր, մեք համայն որդիքըս Նորոյս Սիովնի յայս մեծաշուք հանդիսի աստ ակմբեալ ի մի սիրտ և հոգի մաղթեմք յԱմենակարողէն Աստուծոյ՝ զի զԱթոռ Հայրապետական իշխանութեանդ հաստահիմն արասցէ ցկատարած աշխարհի, քաջառողջ երկարեսցէ զանգին կեանս Աստուածարեալ Քահանայապետիդ և շնորհեսցէ ի փրկութիւն և ի մխիթարութիւն լրութեան ազգիս, օրհնեսցէ, և զամենայն ազգաշահ գործս յաջողելով յաջողեսցէ յօգուտ Հայրենեացս և ի փառս անուան մեծի Վեհիդ: Ամէն.

Ս. Զօհրապ Տէր Սարգսեան:

---

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ

ԱՌ ԱՔԵԼԱՊԱՏԻՒ ՏԷ՛Ր·

Ապաքէն, ո՜հ, սիրտք ի տրոփ, աչ.ք ի հրճուանս տարապայման՝
Քանի՛ ի սուրբ սէր խանդակաթ զմայլին հոգիք Հայկական,
Այս ցնծութիւն, այս Տօն և ինձ տայ խակամիտ պատանւոյս,
Գալ յայս յԱտեան շքեղափառ պարգել հակիրճ բանս հոգւոյս
Եւ ո՞ արդեօք, Վեհափառ Տէ՛ր, խմբեաց զորգիսդ յայսմ՝ վայրի,

Թէ ո՛չ Դուստր վերին Սիոնի, Տաճարն ասեմ Միածնի,
Փութայ խոնարհ ի դէմս զուարթս յԱջոյ հաւբոյր Հովուիդ քաջ,
Շնորհաւորել ի պատկառանս զտօն որբոյն Գէորգեայ։
Գործք սիրոյ և բազմարդիւնք Հայրապետիդ վեհապանծ,
Սուրբ Ճակատիդ հիւսեն զպսակս յայսմ տօնիս զգերազանց,
Զորս ընդ Դաւթի հռչակեսցուք և մեք ազատ ի Մուսայս,
Ընդ ազգիս համայն գովեսցուք յար զՀայրենեացս ժիր Պաշտպանդ։
Այո՛ յաւէտ քաղցրանուագ երգեսցուք մեք ի կիթառ,
ԶՀայրդ ասեմ զՏէր Գէորգ, զարի Հովիւ մեր Հօտին,
Զամուր վահանդ Եկեղեցւոյս՝ զարժանընտիր մեր Գլուխ,
Եւ յարձագանս մեզ փութասցեն սրտաճմլիկ մեր աւերք։
Վիշտք, տառապանք ի մոռացօնս, յայսմ հետէ, Վեհափա՛ռ,
Զեօք շողաց փայլ ի փայլ գրօշակ բոցալուսոյն վառ ի վառ,
Զեօք փթթեցան ծիլք գիտութեան, և վանեցի հեռ, Նախանձ,
Զեօք ծաղկեցան և ծաղկեսցին մեր բուրաստանք կոյտ մնայց։
Փութա՛, ուրեմն, յարատեւեա՛ց Տէրամք, Հա՛յր, որ քան զօր,
Օ՛ն կատարել քաջալերեա՛ց սխրագործ զջանս բեղմնաւոր,
Յօգուտ ի փառս թշուառ մանկանց Հայաստանի սիրելի,
Որք ի վաղուց ի խոր խաւար տգիտութեան խարխափին։
Ուստի և մեք համախմբեալքս զծղիս ի վեր համբարձեալ,
Աղօթեսցո՛ւք միշտ առ Աստուած՝ տալ կեանս Վեհիդ պերճացեալ,
Զի Դու, Հա՛յր սուրբ, զարդարեսցես զմեր սուրբ Մայր փառաւոր,
Յայնժամ, այո՛, սրբեսցին աչք յարտասուաց դառն վշտահար։

Գրչ. Արշակ Պալատեան. աշակերտ ժառանգ. ուսումնարանի Մայր Աթոռոյս.

յ30ն Սեպտեմբերի
1872 ամ

## ՅԵԿԱՏԱՐԻՆԱՏԱՐԷ.

### Խմբագրութեան Արարատ պատուական ամսագրոյ.

Համաձայն սրբազնեալ փափագմանց Նորին Վեհափառութեան Տեառն և Տեառն Գէորգայ Դի Սրբազնակատար Մեծ Հայրապետին մերոյ և կարգադրութեան Հոգաբարձական վարչութեան Ծ. Հ. Մեսրոպեան երկսեռ դպրոցի տեղւոյս, սկիզբն արարեալ ի 15ն Յունիսի ներկայ տարւոյս՝ աւարտեաց ի 23ն նոյն ամսոյ, փոյթեռանդն պարապմամբ հարցաքննութեան ի ներկայութեան հանդիսականաց ոմանց նշանաւորաց, յիւրաքանչիւրում աւուր միոյ կամ երկուց առարկայից ուսմանց Նախապատրաստական Առաջին և Երկրորդ դասատանց. և գտնեալ յառաջադէմ զաշակերտսն ի Նախապատրաստական դասատան թուով 5. վերածեաց յԱռաջնում դասատուն, և աշակերտք երկուք, յառաջնում դասատանէ յերկրորդ դասատուն, և աշակերտք երեք՝ զետեղեցան յերկրորդ դասատանէ յերրորդ դասատուն։

Նոյնպէս և զընտրելագոյնսն յՕրիորդաց վերածեցան թուով 7 ի Նախապատրաստական դասարանէ յառաջնում դասատան, և օրիորդք ութն զետեղեցան յառաջնում դասատանէ յերկրորդ դասատան. զորոց Հոգաբարձութիւնս խնդրէ խոնարհաբար հրատարակել միջոցաւ յէջս Ազգաշահ Ամսագրոյդ, ի լուր և ի բերկրանս բարենախանձ մերազնեայց։

Արդ՝ մնալով ակնկալու կատարման խնդրանաց մերոց եմք և մնամք յաւէտ բարեացապարտք և բարեմաղթուք ազգապարծան ձեռնարկութեանց Միաբանական Խմբագրութեան Լուսակերտ Մեծի Ս. Աթոռոյդ։

Հոգաբարձուք
Յովհաննէս Թումանեանց.
Գէորգ Արղութեանց.

Ի 15 Սեպտեմ. 1872 ամ
յէջմիածին։

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

Պօղոս Արքեպիսկոպոս։ — Ուսումնարանք եւ դաստիարակութիւն։— Պրուսա։ — Գ. Ոստանիկ։ — Սքանչելիք։ — Հաշիւներ։ — Եգիպտոսէն։ — Հռոմ. ազատ Ազգայինք։ — Մալաթիա։ — Ննջումն Տէր Գէորգ Ս. Եպիսկոպոսի։ —

Յ 9ն Սեպտ. ամսոյ ի գիշերին Հայաստանեայց Եկեղեցին զրկեցաւ մի Նշանաւոր և տաղանդաւոր հոգևորական պաշտօնեայէն՝ որ էր ի հասակի 75 ամաց։